ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի՛ ընթերցող

Գրադարանագիտության, մատենագիտության, գրատպության ոլորտին առնչվող հարցադրումները կարիք ունեն պարզաբանումների: Լինելով հասարակության բաղկացուցիչ մասը և հանդիսանալով տեղեկատվության կուտակողներ ու փոխանցողներ՝ գրադարանները հենց այն կառույցներն են, որոնք պետք է զբաղվեն վերոնշյալ ոլորտների ուսումնասիրությամբ: Միևնույն ժամանակ գրադարաններն իրենք հանդիսանում են հետազոտության օբյեկտներ:

Այսօր հայաստանյան իրականության մեջ գիտա-տեղեկատվական ամսագրերի ցանկը բավական ընդգրկուն է, սակայն գրադարանային ոլորտին առնչվող կամ խնդիրները արծարծող պարբերականների թիվը խիստ աղքատիկ է:

1941 թ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը՝ Հ. Քոչարի խմբագրությամբ, հրատարակում է «Բիբլիոգրաֆիական ամսագիրը» (ընդամենը մեկ համար), այնուհետև, երկար ընդմիջումից հետո, 1960 թ.՝ «Գրադարանավար» մասնագիտական ամսագիրը (տարեկան 8 համար): 1961 թ. սկսվում է «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (հրատարակիչ՝ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն) ամսագրի տպագրությունը: 1989 թ. հանդեսը անվանափոխվում է և մինչև 1990 թ. հրատարակվում «Մշակույթ» խորագրով՝ որպես ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության և մշակույթի ֆոնդի հասարակական քաղաքական, մշակույթի և արվեստի հարցերով գիտահանրամատչելի պատկերազարդ հանդես:

Հայաստանի անկախացումից հետո՝ 1996-2008 թթ., Հայաստանի գրադարանային միությունը հրատարակում է իր տարեգիրքը՝ «Տեղեկագիր Հայաստանի գրադարանային միության» վերնագրով (ընդամենը 10 համար): 2004-2014 թթ. ընթացքում Հայաստանի ազգային գրադարանը թողարկում է «Հոգևոր հայրենիք» ամսաթերթը, իսկ 2015- 2019 թթ.՝ «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտա-

մեթոդական ամսագիրը, որը լույս է տեսնում վեցամսյա պարբերականությամբ, էլեկտրոնային ձևաչափով:

Շարունակելով ավանդույթը և կարևորելով ոլորտի ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ Հայկական գրադարանային ասոցիացիան ընթերցողների և գրադարանային հանրության դատին է ներկայացում «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» պարբերականի անդրանիկ համարը՝ որպես ասոցիացիայի տարեգրքի (1996-2008 թթ.) տրամաբանական շարունակություն:

Հանդեսի նպատակն է՝ անդրադառնալ Հայաստանի գրադարանային համակարգում առկա խնդիրներին, արժևորել գրադարանների դերը հասարակական, մշակութային, գիտական, տեղեկատվական կյանքում, ոլորտին առնչվող հարցերում ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների ընդունած որոշումները, ներկայացնել ձեռքբերումները, հետազոտել հայ տպագրության պատմությունը, լուսաբանել այլ երկրներում գրադարանագիտության նվաճումները, ներկայացնել Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնության (IFLA) գործունեությունը:

Հանդեսի առանցքային բաժիններն են՝ «Տեսություն և պրակտիկա», «Ժամանակակից գրադարաններ», «Մշակութային ժառանգություն», «Հայկական գրադարանային ասոցիացիա: Գործընկերություն», «Գրադարանային իրադարձություններ», «Գրադարանային գործի երախտավորներ»:

Ժամանակակից տեխնոլոգիական զարգացումներն անմիջականորեն իրենց ազդեցությունն են ունենում գրադարանային ոլորտի վրա՝ ստիպելով վերանայել ավանդական գործառույթները: Նկատի առնելով զարգացման բուռն ընթացքը՝ ամսագրում, բացի ավանդական գրադարանային խորագրերից, կլուսաբանվեն նաև 21-րդ դարում գրադարանների առջև ծառացած մարտահրավերները և խնդիրները:

Կարծում ենք՝ հանդեսը կընդունվի մասնագիտական հանրույթի կողմից, կդառնա պահանջված հրատարակություն և կնպաստի գրադարանագիտական մտքի զարգացմանը Հայաստանում: